Հուշաթերթ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի համար

Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ:

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից:

Հուշաթերթ-հրահանգը օժանդակ ռեսուրս է հանձնաժողովի անդամի կողմից գործառույթին համապատասխան ընտրողին որակյալ ծառայություն տրամադրելու համար:

ARCHEVNEBI 2024

- Կարգավորե՛ք քվեարկության շենք մտնող ընտրողների հոսքը:
- Քվեարկության շենք մտնել թույլ տալու նպատակով ընտրողին խնդրե՛ք ներկայացնել անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը.
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական,
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (որը չունի տեղեկությունների էլեկտրոնային կրիչ),
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնագիր:

- Նշմարումը ստուգող սարքի (ուլտրամանուշակագույն լապտեր) օգտագործմամբ ստուգե՛ք ընտրողի ձեռքի վրա նշմարման առկայությունը:

Հիշե՛ք:

Ընտրողը, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), չի անցնում նշմարման ստուգման ընթացակարգ:

Ստուգման արդյունքների նախատեսմամբ.

- Եթե նշմարումը ստուգող հատուկ սարքը պարզում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Բացատրե՛ք ընտրողին ընտրատեղամաս մտնելը մերժելու պատճառը, իսկ ընտրողի մասին տվյալները հաղորդե՛ք հանձնաժողովի քարտուղարին՝ գործավարության մատյանում ընդգրկելու նպատակով:
- Եթե ընտրողը բավարարում է քվեարկությանը մասնակցելու համար սահմանված պահանջները, նրան ցուցո՛ւմ տվեք մոտենալ այն գրանցման սեղանին, որտեղ չկա երկուսից ավելի ընտրող: Եթե բոլոր գրանցման սեղանների մոտ երկուսից ավելի ընտրող կա կանգնած, պատճառը բացատրելով, ժամանակավորապես դանդաղեցրե՛ք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը:

Հիշե՛ք:

Քվեարկությունն առանց ստուգման սարքի շարունակելու դեպքում՝ ընտրողին թո՛ւյլ տվեք քվեարկության սենյակ մտնել միայն այն դեպքում, եթե ընտրողների համար հատկացված գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող չկա: Ընտրողին ցուցո՛ւմ տվեք քվեարկության սենյակում մոտենալ այն գրանցման սեղանին, որին պատկանում է ընտրացուցակում ընդգրկված նրա ազգանվան առաջին տառը: